

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0611.01.4  
«ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0611.01.01.4  
«ՕՊԵՐԱՏՈՐ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ**

**ԵՐԵՎԱՆ 2014**



## II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
		Քնն.	Ստուգարք	Կուրս աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		
					Ընդամենը	Այդ թվում		3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս. 15	6-րդ կիս. 16	7-րդ կիս.	8-րդ կիս.	
						Տես. ուսուց.	Լաբոր. և գործն. աշխ.	Սեմինար պարապմունք	շաբ.	շաբ.	շաբ.	շաբ.	շաբ.	շաբ.
<b>1.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>													
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		5,6տ		72	54	18			36	36			
2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		5տ		18	14	4			18				
3	Իրավունքի հիմունքներ		6տ		36	26	6	4			36			
4	Պատմություն		5տ		36	28		8		36				
5	Օտար լեզու		5,6տ		60	42	18			34	26			
6	Ֆիզիկական կուլտուրա		5,6տ		62					30	32			
7	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		6տ		36		30	6			36			
8	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		6տ		18	14		4			18			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>338</b>	<b>178</b>	<b>76</b>	<b>22</b>		<b>154</b>	<b>184</b>			
<b>2.</b>	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>													
1	Հաղորդակցություն		5տ		36	20	16			36				
2	Անվտանգություն և առաջին օգնություն		5տ		36	20	16			36				
3	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		5տ		36	26	10				36			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>108</b>	<b>66</b>	<b>42</b>			<b>72</b>	<b>36</b>			
<b>3.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>													
1	Տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցներ		5տ		90	72	18			90				
2	Օպերացիոն համակարգեր		6տ		54	12	42			54				
3	Համակարգչային ցանցեր		6տ		54	20	34			54				
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>198</b>	<b>104</b>	<b>94</b>			<b>198</b>				

<b>4.</b>	<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>												
1	Տեղեկատվության անվտանգության ապահովում	5տ	36	8	28				36				
2	Փաստաթղթերի մշակման տեխնոլոգիա	6տ	72	6	66				72				
3	Ներկայացումների պատրաստման խմբագիր	6տ	36	4	32					36			
4	Էլեկտրոնային աղյուսակներ	6տ	54	12	42					54			
5	Վեկտորային գրաֆիկայի համակարգեր	6տ	54	10	44					54			
6	Կետային գրաֆիկայի համակարգեր	6տ	54	14	40					54			
7	Հաղորդակցման տեխնոլոգիաներ	6տ	54	14	40					54			
8	Համակարգչային գործավարություն	6տ	54	8	46					54			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>414</b>	<b>76</b>	<b>338</b>				<b>108</b>	<b>306</b>			
<b>5.</b>	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>		42							42			
	<b>ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ</b>		16						8	8			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>1116</b>						<b>540</b>	<b>576</b>			
	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		100										
	Շաբաթվա ժամերի քանակը								36	36			

	<b>IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ</b>			N	<b>VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱՐՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ</b>
1	Ռիթմիկա և պար				<b>ԿԱՔԻՆԵՏՆԵՐ</b>
2	Տարիքային հոգեբանություն			1	հումանիտար առարկաների,
3	Օտար լեզու ( գերմաներեն , ֆրանսերեն )			2	սոցիալ-տնտեսագիտական առարկաների,
				3	հայոց լեզվի և խոսքի մշակույթի,
				4	օտար լեզուների,
	<b>V. ՊՐԱԿՏԻԿԱ</b>	Կիսամյակ	Շաբաթ	5	համակարգչային և հեռահաղորդակցման տեխնիկայի:
1	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	5	2		
2	Նախաավարտական, արտադրական պրակտիկա	6	4		
3					
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>ԼԱՐՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ</b>
<b>VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՏԱԿՈՐՈՒՄ</b> Համալիր պետական քննություն հատուկ մասնագիտական խմբի մոդուլներից Հունիսի 22-ից - Հուլիսի-05-ը					ուսուցման տեխնիկական միջոցների
					<b>ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ</b>
				1	Մարզադահլիճ
				2	Մարզահրապարակ

### **VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների /մոդուլների/ զծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը հաստատությունը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-Հ-3-15-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	1) ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում, 5) խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունական գործընկերության համար:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,

	5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</li> <li>2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,</li> <li>3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,</li> <li>4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</li> <li>5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</li> <li>6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</li> <li>7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստատիրոջ,</li> <li>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</li> <li>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</li> <li>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</li> <li>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</li> <li>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</li> <li>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունական գործընկերության համար
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</li> <li>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</li> <li>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</li> <li>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</li> <li>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</li> <li>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԱՕ-5-15-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4) ցուցաբերի առաջին օգնություն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:

<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն 10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</p> <p>հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</p> <p>էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը:</p> <p>Կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),</p> <p>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</p> <p>3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները:  Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ

<b>Ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ցուցաբերել առաջին օգնություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</li> <li>2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,</li> <li>3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</li> <li>4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</li> <li>5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</li> <li>6) տարբեր կտրվածքների դեպքում կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն,</li> <li>7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության գործողությունները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԳՀ-5-15-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու

	Նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) փնտրի և գտնի աշխատանք, 2) հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ, 3) արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը, 4) ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Փնտրել և գտնել աշխատանք
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, 2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը (երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, 3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), 4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը, 5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային իրավահարաբերություններ ծագման հիմքերի, կողմերի իրավունիքների և պարտականությունների, պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների,

	<p>աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը, կարող է հիմնավորել և լինել համոզիչ՝ տվյալ աշխատատեղում իր համապատասխանության հարցում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգիրք, պայմանագրեր և այլն), տեղեկատվական բազաներ (համակարգիչ, բուկլետներ և այլն), մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,</li> <li>2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</li> <li>3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</li> <li>4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,</li> <li>5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</li> </ol>
<p><b>Փնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական</p>

	<p>իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը:</p> <p>Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</li> <li>2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</li> <li>3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,</li> <li>4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</li> <li>5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային</p>

	<p>դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհագալից վերաբերմունքը, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունները, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության, ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումը կդիտարկվի ուսանողի մոտ նաև գործնականում՝ ուսուցման գործընթացում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՇՕ-3-15-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցների համախմբի վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	90 ժամ տեսական ուսուցում՝ 72 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի ինֆորմատիզացման և ժամանակակից հասարակության ինֆորմատիզացման խնդիրները, ինֆորմացիոն գործընթացները և դրանց իրագործման միջոցները, ինֆորմատիզացման ժամանակակից տեխնիկական միջոցները և դրանց բնութագրիչ հատկանիշները,</li> <li>2) ներկայացնի համակարգչի կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, մայրական սալերի դերն ու պարզագույն կառուցվածքը, անհատական համակարգիչների շինաների ստանդարտները և կառուցվածքը, պրոցեսորների և օպերատիվ հիշողության տեսակները, ինֆորմացիայի կուտակիչները, ճկուն սկավառակով, կոշտ սկավառակով և կոմպակտ սկավառակով կուտակիչների կառուցվածքը, հիմնական բնութագրերը, ինտերֆեյսները, ստանդարտները, ինֆորմացիայի օպտիկական կրիչների հեռանկարային տեխնոլոգիաները և ինֆորմացիայի պահպանման արտաքին սարքերը,</li> <li>3) ներկայացնի ինֆորմացիայի արտապատկերման սարքերի տիպերը՝ մոնիտորների, պրոյեկցիոն սարքավորումների, տեսաադապտորների, տեսաագդանշանի մշակման միջոցների տարատեսակները, աշխատանքի սկզբունքը, առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները, կարողանա միացնել և կարգավորել</li> </ol>

	<p>դրանց աշխատանքը,</p> <p>4) ներկայացնի տեսաձայնային (աուդիոհինֆորմացիա) ինֆորմացիայի մշակման և վերարտադրման համակարգերը՝ ԱՀ-ի ձայնային համակարգը, ձայնագրման և վերարտադրման մոդուլը, սինթեզատորի մոդուլը, ինտերֆեյսների մոդուլը, միկշերի (խառնիչի) մոդուլը, թվային ձայնային համակարգը, 3d-ձայնի տեխնոլոգիան և ակուստիկ (ձայնի վերարտադրման) համակարգերը, կարողանա միացնել համակարգչին և կարգավորի դրանց աշխատանքը,</p> <p>5) ներկայացնի ինֆորմացիայի նախապատրաստման (մուտքագրման՝ ստեղնաշար, օպտիկա-մեխանիկական մանիպուլյատորներ՝ մկնիկ, ջոյստիկ, թրեկբոլ, սկաներներ, թվային խցիկներ, վեբ-խցիկներ, դիգիթայզերներ և էլեկտրոնային պլանշետներ, մուտքագրման սենսորային սարքեր) և տպող սարքերի տիպերը, բնութագրերը և աշխատանքի սկզբունքը, կարողանա միացնել համակարգչին և կարգավորի դրանց աշխատանքը,</p> <p>6) ներկայացնի հեռահաղորդակցման համակարգերի տեխնիկական միջոցները, կառուցվածքները և հիմնական բնութագրերը, լոկալ ցանցերը և ցանցային ապարատային միջոցները, անլար կապի տեխնոլոգիաները՝ bluetooth և WI-FI, կապի արբանյակային համակարգերը, ֆաքսիմիլային կապը, և ինֆորմացիայի փոխանակման սկզբունքը մոդեմի միջոցով:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Ներկայացնել ինֆորմատիզացման և ժամանակակից հասարակության ինֆորմատիզացման խնդիրները, ինֆորմացիոն գործընթացները և դրանց իրագործման միջոցները, ինֆորմատիզացման ժամանակակից տեխնիկական միջոցները և դրանց բնութագրիչ հատկանիշները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում ինֆորմատիզացման և ժամանակակից հասարակության ինֆորմատիզացման խնդիրները, ինֆորմացիոն գործընթացները և դրանց իրագործման միջոցները, ինֆորմատիզացման ժամանակակից տեխնիկական միջոցները և դրանց բնութագրիչ հատկանիշները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ինֆորմատիզացման տեխնիկական միջոցների ընդհանուր բնութագրումը՝ որպես տեղեկատվական տեխնոլոգիաների ապարատային հենք (բազիս),</p> <p>3) ճիշտ է ներկայացնում ինֆորմացիայի քանակը և չափման միավորները, ինֆորմացիայի ներկայացման մեթոդները համակարգիչ մուտքագրելու համար, ինֆորմատիզացման տեխնիկական միջոցների դասակարգումը,</p> <p>4) բացատրում է, թե ինչպես են կողավորվում տեքստի սիմվոլները և ինչ տարբերություն կա սովորական 8 բիթանի</p>

	կողավորման և նոր Unicode կողավորման միջև, որ պարամետրերն են որոշում ձայնի 2-ական կողավորման որակը և ինչպես է տեղի ունենում գրաֆիկական ինֆորմացիայի 2-ական կողավորումը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կառաջադրվեն նախօրոք կազմված հարցաշար, ինֆորմատիզացման ժամանակակից տեխնիկական միջոցների և դրանց բնութագրիչ հատկանիշների, ինֆորմացիայի ներկայացման մեթոդները համակարգիչ մուտքագրելու համար, ինֆորմատիզացման տեխնիկական միջոցների դասակարգման և տեքստի սիմվոլների, ձայնի և գրաֆիկական ինֆորմացիայի 2-ական կողավորման վերաբերյալ: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:  Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում տրված հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց, պրոյեկցիոն սարք և դիդակտիկ նյութեր, ծրագրային փաթեթներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել համակարգչի կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, մայրական սալերի դերն ու պարզագույն կառուցվածքը, անհատական համակարգիչների շինաների ստանդարտները և կառուցվածքը, պրոցեսորների և օպերատիվ հիշողության տեսակները, ինֆորմացիայի կուտակիչները, ճկուն սկավառակով, կոշտ սկավառակով և կոմպակտ սկավառակով կուտակիչների կառուցվածքը, հիմնական բնութագրերը, ինտերֆեյսները, ստանդարտները, ինֆորմացիայի օպտիկական կրիչների հեռանկարային տեխնոլոգիաները և ինֆորմացիայի պահպանման արտաքին սարքերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում ահ պարզագույն կառուցվածքը և նրա մեջ մտնող սարքերի նախատեսվածությունը, 2) ճիշտ է ներկայացնում հիշողության դասակարգումը և կարողանում է թվարկել հիշողության տարբեր տիպերի անունները և բնութագրերը, 3) ճիշտ է ներկայացնում մայրական սալի կազմի մեջ մտնող հիմնական բաղկացուցիչ մասերը և դրանց դերը, 4) ճիշտ է ներկայացնում ահ շինայի նախատեսվածությունը, հիմնական բնութագրերը, կազմությունը, շինայի և կայանի միջև տարբերությունները,

	<p>5) ճիշտ է ներկայացնում տարբեր սերունդների պրոցեսորների առանձնահատկությունները և պրոցեսորների արտադրողականությունը բնութագրող պարամետրերը,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում օպերատիվ հիշողության դերը և կարողանում է թվարկել հիշողության միկրոսխեմաների բնութագրերը ,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում ինֆորմացիայի կուտակիչների տիպերը, մագնիսական կրիչների վրա ինֆորմացիայի գրանցման և վերարտադրման հիմքում ընկած ֆիզիկական երևույթները,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում և կոշտ մագնիսական սկավառակով կուտակիչների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը և կմսկ-բնութագրերը,</p> <p>9) ճիշտ է ներկայացնում կոմպակտ սկավառակների (cd) պատրաստման գործընթացի հիմնական փուլերը և տվյալների կազմակերպումը cd rom-ի վրա,</p> <p>10) բացատրում է, թե ինչպես է տեղի ունենում ինֆորմացիայի գրանցումը cd-warm, cd-r և cd-rw սկավառակների վրա, որն է dvd կուտակիչների հիմնական առավելությունը, ինչպես է տեղի ունենում ինֆորմացիայի ընթերցումը երկշերտ dvd սկավառակի վրայից, ինչպես է տեղի ունենում ինֆորմացիայի գրանցումը և ընթերցումը մագնիսաօպտիկական սկավառակի վրա,</p> <p>11) ճիշտ է ներկայացնում մագնիսական ժապավենով կուտակիչների կիրառման ոլորտները, առավելությունները և թերությունները, flash հիշողության աշխատանքը,</p> <p>12) կարողանում է կատարել ինֆորմացիայի գրանցում ճկուն, կոշտ, cd-r և cd-rw և flash սկավառակների վրա,</p> <p>13) գիտի և պահպանում է աշխատանքի անվտանգության և ինֆորմացիայի պահպանման կանոնները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն նախօրոք կազմված հարցաշար համակարգչի և նրա բաղկացուցիչ մասերի կառուցվածքային առանձնահատկությունների, բնութագրերի ու աշխատանքի սկզբունքի, նրանց կապակցման միջոցների, սարքերի միացման ու ծրագրային կարգավորման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց, ծրագրային փաթեթ, պրոյեկցիոն սարք և դիտակտիկ</p>

	պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել ինֆորմացիայի արտապատկերման սարքերի տիպերը՝ մոնիտորների, պրոյեկցիոն սարքավորումների, տեսաադապտորների, տեսաազդանշանի մշակման միջոցների տարատեսակները, աշխատանքի սկզբունքը, առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները, կարողանալ միացնել և կարգավորել դրանց աշխատանքը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում մոնիտորների տարատեսակները՝ (ԷՃԽ մոնիտորներ, մուլտիմեդիական մոնիտորներ, հարթապանելային՝ ՀԲ, պլազմային, էլեկտրոյումիէսցենտային, էլեկտրաստատիկ էմիսիայով, օրգանական լուսադիոդային, սենսորային մոնիտորներ),</li> <li>2) ճիշտ է ներկայացնում ԷՃԽ-ով մոնիտորների հիմնական բնութագրերը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում մուլտիմեդիական մոնիտորների հիմնական առանձնահատկությունը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում ՀԲ-մոնիտորների աշխատանքը և այն ֆիզիկական երևույթները, որի վրա հիմնված է նրա աշխատանքը,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում մոնիտորների ընտրության ժամանակ ուշադրություն դարձվող անհրաժեշտ գործոնների վրա,</li> <li>6) ճիշտ է ներկայացնում պրոյեկցիոն սարքավորումների (Over-Head պրոյեկտորներ, մուլտիմեդիական պրոյեկտորներ) տարատեսակները, Over-Head պրոյեկտորի ՀԲ-պանելի առանձնահատկությունը ՀԲ-մոնիտորի հետ համեմատած և DMD/DLP տեխնոլոգիայով իրագործված պրոյեկտորների առավելությունները,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում վիրտուալ իրականության սարքավորումների հայտնի տարատեսակները՝ (VR) շլեմներ, 3D-ակնոցներ, 3D-մոնիտորներ, 3D-պրոյեկտորներ, եռաչափ պատկերների սինթեզի հիմնական սկզբունքները և 3D-պրոյեկտորների աշխատանքի առանձնահատկությունը,</li> <li>8) ճիշտ է ներկայացնում տեսաադապտորի նախատեսվածությունը, աշխատանքի սկզբունքը և տեսաազդանշանի ձևավորման հիմնական փուլերը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն նախօրոք կազմված հարցաշար մոնիտորների տարատեսակների՝ (ԷՃԽ

	<p>մոնիտորներ, մուլտիմեդիական մոնիտորներ, հարթապանելային՝ ՀԲ, պլազմային, էլեկտրոլյումինեսցենտային, էլեկտրաստատիկ էմիսիայով, օրգանական լուսադիոդային, սենսորային մոնիտորներ), պրոյեկցիոն սարքավորումների (Over-Head պրոյեկտորներ, մուլտիմեդիական պրոյեկտորներ) տարատեսակների, Over-Head պրոյեկտորի ՀԲ-պանելի առանձնահատկությունի, ՀԲ-մոնիտորի հետ համեմատած և DMD/DLP տեխնոլոգիայով իրագործված պրոյեկտորների առավելությունների, տեսաադապտորի նախատեսվածության, աշխատանքի սկզբունքի և տեսաազդանշանի ձևավորման հիմնական փուլերի վերաբերյալ:</p> <p>Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, համակարգչի վրա տրված առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց, պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ներկայացնել տեսաձայնային (աուդիոհինֆորմացիա) ինֆորմացիայի մշակման և վերարտադրման համակարգերը՝ ԱՀ-ի ձայնային համակարգը, ձայնագրման և վերարտադրման մոդուլը, սինթեզատորի մոդուլը, ինտերֆեյսների մոդուլը, միկշերի (խառնիչի) մոդուլը, թվային ձայնային համակարգը, 3D-ձայնի տեխնոլոգիան և ակուստիկ (ձայնի վերարտադրման) համակարգերը, կարողանալ միացնել համակարգչին և կարգավորել դրանց աշխատանքը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ԱՀ-ի ձայնային համակարգի հիմնական ֆունկցիաները և բաղկացուցիչ մասերը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում անալոգաթվային ձևափոխում (ԱԹՁ-ում) ազդանշանի դիսկրետացման հաճախականությանը ստացման եղանակը,</li> <li>3) կարողանում է թվարկել անալոգաթվային և թվաանալոգային ձևափոխությունների հիմնական փուլերը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում ձայնի գրանցման և վերարտադրման մոդուլները բնութագրող հիմնական պարամետրերը և ձայնի սինթեզի օգտագործվող մեթոդները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում միկշերի մոդուլի կատարած ֆունկցիաները և բնութագրերը,</li> <li>6) բացատրում է, թե ինչպես է տեղի ունենում մաթեմատիկական մոդելավորումը 3D-ձայնի ստեղծման դեպքում,</li> </ol>

	<p>7) ճիշտ է ներկայացնում /ԱՀ/ ակուստիկ համակարգերը,</p> <p>8) միացնում է ձայնի մշակման միջոցները և կարգավորում դրանց աշխատանքը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն նախօրոք կազմված հարցաշար տեսաձայնային (աուդիոինֆորմացիա) ինֆորմացիայի մշակման և վերարտադրման համակարգերի, ԱՀ-ի ձայնային համակարգի, ձայնագրման և վերարտադրման մոդուլի, սինթեզատորի, ինտերֆեյսների, միկշերի (խառնիչի) մոդուլների, թվային ձայնային համակարգի, 3D-ձայնի տեխնոլոգիայի և ակուստիկ (ձայնի վերարտադրման) համակարգերի և դրանց աշխատանքի կարգավորման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Դասընթացը կազմակերպվում է կոմբինացված դասերի միջոցով՝ կիրառելով համակարգիչ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , դիդակտիկ նյութեր, ծրագրային փաթեթներ, պրոյեկտոր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 12 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<p>Ներկայացնել ինֆորմացիայի նախապատրաստման (մուտքագրման՝ ստեղնաշար, օպտիկա-մեխանիկական մանիպուլյատորներ՝ մկնիկ, ջոյստիկ, թրեկբոլ, սկաներներ, թվային խցիկներ, վեր-խցիկներ, դիգիթայզերներ և էլեկտրոնային պլանշետներ, մուտքագրման սենսորային սարքեր) և տպող սարքերի տիպերը, բնութագրերը և աշխատանքի սկզբունքը, կարողանալ միացնել համակարգչին և կարգավորել դրանց աշխատանքը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ստեղնաշարների տիպերը և հայտնի տիպերի աշխատանքի սկզբունքը,</li> <li>2) բացատրում է, թե ինչ հիմնական տարրեր են մտնում օպտիկամեխանիկական մկնիկի կոնստրուկցիայի կազմում,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում սկաներների տիպերը և օպտիկամեխանիկական մկնիկի կոնստրուկցիայի կազմի մեջ մտնող տարրերը,</li> <li>4) բացատրում է, թե ինչ ֆոտոտվիչներ են օգտագործվում սկաներներում և ինչպես է տեղի ունենում</li> </ol>

	<p>սկանավորումը պլանշետային սկաներներում, ինչպես են աշխատում անկոնտակտ 3D-սկաները, կարողանում է համեմատել գունավոր սկաներների կոնստրուկտիվ տարբերակները, միացնել համակարգչին ու կարգավորել դրա աշխատանքը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում պրինտերի տիպերը, աշխատանքի տեքստային և գրաֆիկական ռեժիմները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում լազերային տպիչների կազմի մեջ մտնող հիմնական հանգույցները և նրա աշխատանքի հիմքում ընկած ֆիզիկական երևույթները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում, թե ժամանակակից տպիչներից որն է հարմար օգտագործել ֆոտոգրաֆիկական որակի պատկեր ստանալու համար, ինչ առավելություններ և թերություններ ունեն թերմոտպիչները, ինչպես են աշխատում սուբլիմացիոն և չորթանաքային տպիչները և որն է LED-տպիչների առավելությունը լազերայինի հետ համեմատած,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում պլոտերների տիպերը, վեկտորային և ռաստրային տիպերի պլոտերների տարբերությունները, ռուլոնային պլոտերների առավելությունը պլանշետայինի հետ համեմատած, պատկերը անմիջապես արտաբերող պլոտերների աշխատանքի մեխանիզմը:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի հարցաշար ստեղծաշարների, սկաների, պրինտերի, պլոտերի տիպերի, աշխատանքի սկզբունքի, օպտիկամեխանիկական մկնիկի կոնստրուկցիայի կազմի մեջ մտնող տարրերի, աշխատանքի տեքստային և գրաֆիկական ռեժիմների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Դասընթացը կազմակերպվում է կոմբինացված դասերի միջոցով՝ կիրառելով համակարգիչ, դիդակտիկ նյութեր, գրականություն, ծրագրային փաթեթներ, պրոյեկտոր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 6</b></p>	<p>Ներկայացնել հեռահաղորդակցման համակարգերի տեխնիկական միջոցները, կառուցվածքները և հիմնական բնութագրերը, լոկալ ցանցերը և ցանցային ապարատային միջոցները, անլար կապի տեխնոլոգիաները՝ BLUETOOTH</p>

	և WI-FI, կապի արբանյակային համակարգերը, ֆաքսիմիլային կապը, և ինֆորմացիայի փոխանակման սկզբունքը մոդեմի միջոցով
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կարողանում է կատարել կլիենտ-սերվեր տիպի ցանցերի համեմատական վերլուծում՝ կառուցված աստղաձև, օղակաձև և շինային տոպոլոգիաների հիման վրա,</li> <li>2) թվարկում է լոկալ ցանցերի հիմնական բաղկացուցիչ մասերը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում հեռահաղորդակցման միջոցների կապի գծերի կառուցվածքը և դասակարգումը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում սմարտֆոնների և կոմունիկատորների միջև եղած տարբերությունը,</li> <li>5) համեմատում է BLUETOOTH և WI-FI սարքավորումների գործողության սկզբունքները և շառավիղերը,</li> <li>6) բացատրում է, թե ինչու են մոբիլային ռադիոհեռախոսային կապը անվանում բջջային կապ,</li> <li>7) բացատրում է, թե ինչ սկզբունքով են ընտրում մոդեմները, ինչ աշխատանքի սկզբունք ունի մոդեմը և ինչ տիպի մոդեմներ են հայտնի,</li> <li>8) կարողանում է կատարել ինֆորմատիզացման տեխնիկական միջոցների սպասարկման և աշխատանքային տեղի կազմակերպման աշխատանքներ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն աստղաձև, օղակաձև և շինային տոպոլոգիաների հիման վրա կառուցված կլիենտ-սերվեր տիպի ցանցերի համեմատական վերլուծման, հեռահաղորդակցման միջոցների կապի գծերի կառուցվածքի և դասակարգման, սմարտֆոնների և կոմունիկատորների միջև եղած տարբերությունների, BLUETOOTH և WI-FI սարքավորումների գործողության սկզբունքների և շառավիղերի, մոդեմների տիպերի, բջջային կապի առավելությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Դասընթացը կազմակերպվում է կոմբինացված դասերի միջոցով՝ կիրառելով համակարգիչ, դիդակտիկ նյութեր, գրականություն, ծրագրային փաթեթներ, պրոյեկտոր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՕՊԵՐԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՇՕ-3-15-002
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ օպերացիոն համակարգերի վերաբերյալ և զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են օպերացիոն համակարգերի, կիրառական ծրագրերի, հավելվածների, սարքերի դրայվերների տեղադրման, կարգավորման և օգտագործման համար:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՇՕ-3-15-001 «Տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցներ» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի անհատական համակազմիչների սերունդների կառուցվածքային և ծրագրային ապահովման առանձնահատկությունները, ֆայլային համակարգերը, օպերացիոն համակարգերի տարբեր տիպերը, զանգվածային կիրառություն ունեցող օպերացիոն համակարգի ինտերֆեյսի կառուցվածքը և կատարի ինտերֆեյսի կարգավորում ու կառուցվածքային փոփոխություններ,</li> <li>2) կատարի օպերացիոն համակարգերի, դրանց բաղկացուցիչ մասերի փոխգործակցման ծրագրային ապահովման՝ դրայվերների, կիրառական ծրագրերի տեղադրում և կարգավորում,</li> <li>3) կատարի գործողություններ ֆայլերի, թղթապանակների և սկավառակների հետ, աշխատի ստանդարտ գրաֆիկական և տեքստային խմբագրիչներով, կազմակերպի տարբեր տիպերի ֆայլերի որոնման, ստուգման ու սեղմագրման գործողություններ,</li> <li>4) օգտագործի տեքստի պատրաստման համար տարբեր ազգային տառատեսակներ (այբուբեններ), աշխատի օպերացիոն համակարգի ստանդարտ ծրագրերով՝ գրաֆիկական և տեքստային խմբագիրներով, կարգավորի տարածաշրջանային ստանդարտները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել անհատական համակարգիչների սերունդների կառուցվածքային և ծրագրային ապահովման առանձնահատկությունները, ֆայլային համակարգերը, օպերացիոն համակարգերի տարբեր տիպերը, զանգվածային կիրառություն ունեցող օպերացիոն համակարգի ինտերֆեյսի կառուցվածքը և կատարել ինտերֆեյսի կարգավորում ու կառուցվածքային փոփոխություններ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է օգտագործում տարբեր ազգային տառատեսակները և կատարում է դրանք փոխող ստեղնաշարի դրայվերի տեղադրում, կարգավորում ու տարածաշրջանային ստանդարտների հաստատում,</li> <li>2) ճիշտ է աշխատում օպերացիոն համակարգի ստանդարտ ծրագրերով,</li> <li>3) ճիշտ է կատարում տարբեր լեզուներով տեքստային ինֆորմացիայի ստեղծման և մշակման գործողությունները,</li> <li>4) ճիշտ է օգտագործում տվյալների փոխանակման բուֆերի հրամանները,</li> <li>5) ճիշտ է ընտրում նշված ֆայլի բացման համար համապատասխան ծրագիրը, պահպանում է աշխատանքի անվտանգության և ինֆորմացիայի պահպանման կանոնները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կտրվի համապատասխան հարցեր պարունակող հարցաթերթիկ համակարգչի սերունդների կառուցվածքային և ծրագրային ապահովման առանձնահատկությունների, ֆայլային համակարգերի, ֆայլի բացման համար օգտագործվող ծրագրի, օպերացիոն տարբեր համակարգերի տիպերի, օպերացիոն համակարգի ստանդարտ ծրագրերի գործարկման, օպերացիոն համակարգի ինտերֆեյսի փոփոխությունների, ծրագրերի տեղադրման և հեռացման, սարքերի ռեժիմների կարգավորման, անհրաժեշտ ինֆորմացիայի փնտրման, տարբեր ազգային տառատեսակների հետ աշխատանքի, դրայվերների տեղադրման, ֆայլերի, թղթապանակների, էլեկտրոնային փոստի ստեղծման, ֆայլերի պատճենահանման, վերանվանման, հեռացման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց, պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կատարել օպերացիոն համակարգերի, դրանց բաղկացուցիչ մասերի փոխգործակցման ծրագրային ապահովման՝

	<p>դրայվերների, կիրառական ծրագրերի տեղադրում և կարգավորում</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում տարբեր տիպերի օպերացիոն համակարգերի առանձնահատկությունները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում համակարգային պահանջները օպերացիոն համակարգի տեղադրումից առաջ,</li> <li>3) ճիշտ է կատարում նախապատրաստական աշխատանքներ՝ ծրագրային փաթեթների որոշում, ընտրում և տեղադրման համար անհրաժեշտ ծրագրեր պարունակող օպտիկական սկավառակների ընտրում,</li> <li>4) ճիշտ է կատարում օպտիկական սկավառակը համապատասխան շարժաբերում տեղադրման և օպտիկական սկավառակից բեռնավորման գործընթացը,</li> <li>5) ճիշտ է կատարում տարածաշրջանային, լեզվի և տարածքային չափանիշների, ստեղնաշարի դասավորության ընտրում և կատարում է կարգավորում վերաբեռնավորումից հետո բացված երկխոսության պատուհաններում,</li> <li>6) ճիշտ է կատարում օգտագործողի իրավասությունների հաստատում՝ համապատասխան երկխոսության պատուհանում,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում օպերացիոն համակարգի վերատեղակայման և թարմացման գործընթացի առանձնահատկությունները,</li> <li>8) ճիշտ է կատարում համակարգչի բաղկացուցիչ մասերի փոխգործակցման ծրագրային ապահովման՝ դրայվերների տեղադրում և կարգավորում,</li> <li>9) ճիշտ է կատարում տրված կիրառական ծրագրային փաթեթի տեղադրում և կարգավորում,</li> <li>10) ճիշտ է կատարում ֆայլերի, սկավառակների հակավիրուսային ստուգման և արխիվացման աշխատանքները,</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի համապատասխան հարցեր պարունակող հարցաթերթիկ օպերացիոն համակարգերի առանձնահատկությունների, օպերացիոն համակարգի վերատեղակայման և թարմացման գործընթացի առանձնահատկությունների, նախապատրաստական աշխատանքների՝ ծրագրային փաթեթների որոշման, ընտրման և տեղադրման, անհրաժեշտ ծրագրեր պարունակող օպտիկական սկավառակների ընտրման և օպտիկական սկավառակից բեռնավորման գործընթացի, կիրառական ծրագրային փաթեթի տեղադրման և կարգավորման, ֆայլերի, սկավառակների հակավիրուսային ստուգման և արխիվացման աշխատանքների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց, պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կատարել գործողություններ ֆայլերի, թղթապանակների և սկավառակների հետ, աշխատել ստանդարտ գրաֆիկական և տեքստային խմբագրիչներով, կազմակերպել տարբեր տիպերի ֆայլերի որոնման, ստուգման ու սեղմագրման գործողություններ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ֆայլերի տիպերը, ֆայլերի, թղթապանակների, պիտակների, սկավառակների հետ օգտագործվող հրամանները և «տաք ստեղծերը» ,</li> <li>2) ճիշտ է կատարում ֆայլերի, թղթապանակների, պիտակների ստեղծումը, պատճենումը, տեղափոխումը և վերանվանումը, տեղափոխումը զամբյուղ և վերականգնում զամբյուղից կամ հեռացնում,</li> <li>3) ճիշտ է թղթապանակը դարձնում հասանելի (sharing) տեղային համակարգչային ցանցի մյուս համակարգիչների համար,</li> <li>4) ճիշտ է կատարում տարբեր տիպերի ֆայլերի և ֆայլերի խմբի որոնում,</li> <li>5) ճիշտ է կատարում ֆայլերի և սկավառակների հակավիրուսային ստուգում,</li> <li>6) ճիշտ է կատարում ֆայլերի խմբի և թղթապանակների սեղմագրման կամ արխիվացման աշխատանքները,</li> <li>7) ճիշտ է կատարում սկավառակների վրա ինֆորմացիայի պատճենման, տեղափոխման, ֆորմատավորման և ստուգման աշխատանքները,</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կտրվի հարցաթերթիկ ֆայլերի, թղթապանակների և սկավառակների հետ գործողությունների կատարման՝ ստեղծման, պատճենման, տեղափոխման, և վեանվանման, զամբյուղ տեղափոխման և վերականգման կամ հեռացման, ֆայլերի կամ ֆայլերի խմբի որոնման վերաբերյալ: Ուսանողին կտրվի տարբեր լեզուներով տեքստերի նմուշներ, ճկուն սկավառակներ և կտրամադրվի անհրաժեշտ հակավիրուսային և արխիվատոր ծրագրեր, ըստ որի ուսանողը որոշակի ժամանակի ընթացքում պետք է կատարի տեքստի և նկարի ստեղծման, խմբագրման, պահպանման, ստուգման և արխիվացման աշխատանքներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և</p>

	առաջադրանքը իրականացնում է անսխալ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց, պլակատներ, պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Օգտագործել տեքստի պատրաստման համար տարբեր ազգային տառատեսակներ (այբուբեններ), աշխատել օպերացիոն համակարգի ստանդարտ ծրագրերով՝ գրաֆիկական և տեքստային խմբագիրներով, կարգավորել տարածաշրջանային ստանդարտները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է օգտագործում տարբեր ազգային տառատեսակները և կատարում է դրանք փոխող ստեղծաշարի դրայվերի տեղադրում, կարգավորում ու տարածաշրջանային ստանդարտների հաստատում,</li> <li>2) ճիշտ է աշխատում օպերացիոն համակարգի ստանդարտ ծրագրերով,</li> <li>3) ճիշտ է կատարում տարբեր լեզուներով տեքստային ինֆորմացիայի ստեղծման և մշակման գործողությունները,</li> <li>4) ճիշտ է օգտագործում տվյալների փոխանակման բուֆերի հրամանները,</li> <li>5) ճիշտ է ընտրում նշված ֆայլի բացման համար համապատասխան ծրագիրը, պահպանում է աշխատանքի անվտանգության և ինֆորմացիայի պահպանման կանոնները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի տարբեր ազգային տառատեսակների օգտագործման, դրանք փոխող ստեղծաշարի դրայվերների տեղադրման, տարբեր լեզուներով տեքստային ինֆորմացիայի ստեղծման և մշակման գործողությունների վերաբերյալ առաջադրանքներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց, պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված</b>	գործնական աշխատանք՝ 12 ժամ

<b>Ժամաքանակը</b>	
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՇՕ-3-15-003
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ համակարգչային ցանցերի ընդհանրացված կառուցվածքի, տրամաբանական կառուցվածքի, ցանցային սարքավորումների աշխատանքի, ցանցերում ինֆորմացիայի պաշտպանության և հասցեավորման համակարգի վերաբերյալ, ինչպես նաև ֆայլային համակարգում համակարգչային կառավարման ու ցանցում ինֆորմացիայի պաշտպանության վերաբերյալ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 34 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած ՀՇՕ-3-15-001 «Տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցներ», և ՀՇՕ-3-15-002 «Օպերացիոն համակարգեր» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի համակարգչային ցանցերի տեսակները, սարքավորումները, տոպոլոգիաները, ճարտարապետությունը, բացատրի համակարգչային ցանցերի կազմակերպման միառանգ և կլիենտ-սերվեր ճարտարապետությունների կազմակերպման սկզբունքները, 2) ներկայացնի տվյալների հաղորդման գործընթացի բնութագրերը՝ տվյալների հաղորդման ռեժիմները, հաղորդման կոդերը, մեթոդները և հաղորդիչ միջավայրի մուտքի եղանակները, 3) կատարի համակարգչային կառավարում ֆայլային համակարգում և ինֆորմացիայի պաշտպանություն ցանցում:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել համակարգչային ցանցերի տեսակները, սարքավորումները, տոպոլոգիաները, ճարտարապետությունը, բացատրել համակարգչային ցանցերի կազմակերպման միառանգ և կլիենտ-սերվեր ճարտարապետությունների կազմակերպման սկզբունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում համակարգչային ցանցերի սահմանումը նշանակությունը և դասակարգումը,

	<p>2) ճիշտ է ներկայացնում ցանցերի տոպոլոգիաները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում ցանցային սարքավորումները և դրանց աշխատանքի սկզբունքը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում կապի գծերի տեսակները, մալուխների տեսակները և նրանց բնութագրերը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում համակարգչային ցանցերի տեսակները կազմակերպան սկզբունքները և առանձնահատկությունները,</p> <p>6) բացատրում է միառանգ և կլիենտ-սերվեր ճարտարապետությունների կազմակերպան սկզբունքները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի հարցաշարի հաշվողական ցանցի սահմանման և ցանցի բնութագրիչների, ինֆորմացիոն հաշվողական համակարգերի դասերի (LAN, MAN, WAN), ցանցային տոպոլոգիաների (ամբողջական, ուղիղ, օղակաձև, աստղաձև, խառը), ցանցային սարքավորումների (կրկնիչ, կոնցենտրատոր, կամուրջ, կոմուտատոր, երթուղավորիչ, Firewall, հաղորդման գծեր, կոակսյալ մալուխ, ոլորագույգ, օպտոթեյլային մալուխ և այլն), ցանցային ադապտորի, մոդեմի, միառանգ ցանցի կառուցվածքի, կլիենտ-սերվեր ճարտարապետության վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Դասընթացներն անցկացվում են համակարգչային լաբորատորիայում: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 16 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել տվյալների հաղորդման գործընթացի բնութագրերը՝ տվյալների հաղորդման ռեժիմները, հաղորդման կողերը, մեթոդները և հաղորդիչ միջավայրի մուտքի եղանակները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում տվյալների հաղորդման հիմնական բաղադրիչները և տվյալների հաղորդման ռեժիմները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում տվյալների հաղորդման եղանակները և հաղորդման կողերը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում հաղորդման մեթոդները և բացատրում է անալոգային ու թվային մոդուլյացիաների կազմակերպան սկզբունքները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հաղորդիչ միջավայրի մուտքի եղանակները:</p>

<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է համապատասխան հարցաշարի հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողը ըստ համապատասխան հարցաշարի հմտությամբ պետք է կարողանա շարադրել տվյալների հաղորդման գործընթացի հիմնական բաղադրիչները (հաղորդիչ, ընդունիչ, հաղորդում, հաղորդման միջոց), տվյալների հաղորդման ռեժիմները (սիմպլեքսային, կիսադուպլեքսային, դուպլեքսային), տվյալների հաղորդման եղանակները (տվյալների սինխրոն և ասինխրոն փոխանցումներ), հաղորդման կոդերը (զուգահեռ՝ ASCII, հաջորդական), հաղորդման մեթոդները (անալոգային մոդուլյացիա, թվային մոդուլյացիա) և հաղորդիչ միջավայրի մուտքի եղանակները (դետերմինացված, ոչ դետերմինացված): Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, համակարգչի վրա տրված առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 12 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Կատարել համակարգչային կառավարում ֆայլային համակարգում և ինֆորմացիայի պաշտպանություն ցանցում</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կատարում է սկավառակների կառավարում օպերացիոն համակարգի միջավայրում (Computer Management),</li> <li>2) կատարում է հաշվառումային կատալոգի ընտրում, ստեղծում, օգտագործողի ծածկագրի տեղադրում և փոփոխում,</li> <li>3) հաստատում է օգտագործողների խմբերի իրավունքները,</li> <li>4) կատարում է կատալոգների և ֆայլերի հասանելիության ղեկավարում,</li> <li>5) կատարում է ընդհանուր ռեսուրսներին հասանելիության թույլատրում՝ FAT և NTFS ֆայլային համակարգի օգտագործման դեպքում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի հարցաշար սկավառակների կառավարման (Computer Management), հաշվառումային կատալոգի (New User) ընտրման, ստեղծման, օգտագործողի ծածկագրի տեղադրման և փոփոխման,</p>

	<p>օգտագործողների և օգտագործողների խմբերի իրավունքների հաստատման (Local Security Policy), կատալոգների և ֆայլերի հասանելիության ղեկավարման (Folder Options), հաշվառումային կատալոգի (Account) ընտրման, ստեղծում, օգտագործողի ծածկագրի տեղադրման և փոփոխման, ընդհանուր ռեսուրսներին հասանելիության թույլատրման FAT և NTFS ֆայլային համակարգի օգտագործման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 18 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՇՕ-3-15-004
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսում է ուսանողին տալ ընդհանուր գիտելիքներ տեղեկատվության անվտանգության դերի ու նշանակության, տեղեկատվության պահպանման կանոնների մասին: Ուսանողի մոտ զարգացնել տեղեկատվության անվտանգության հետ կապված համալիր գործառույթներ կատարելու հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 28 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար, ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՇՕ-3-15-001 «Տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցներ», և ՀՇՕ-3-15-002 «Օպերացիոն համակարգեր» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի վնասակար ծրագրերի տարատեսակները, տարածման ձևերը և պայքարելու եղանակները,</li> <li>2) աշխատի հակավիրուսային ծրագրերի հետ՝ տեղադրում, թարմացում, զննում,</li> <li>3) կատարի ֆայլերի, թղթապանակների պաշտպանում ծածկագրով,</li> </ol>

	4) սահմանի օգտագործողների իրավունքները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել վնասակար ծրագրերի տարատեսակները, տարածման ձևերը և պայքարելու եղանակները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում վնասակար ծրագրերի տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում վնասակար ծրագրերի տարածման ձևերը, 3) ճիշտ է ներկայացնում վնասակար ծրագրերի տարածման դեմ պայքարի եղանակները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն համապատասխան հարցեր պարունակող հարցաթերթիկ վիրուսների, վիրուսների հիմնական հատուկությունների, նրանց դասակարգման, վիրուսով վարակվելու ճանապարհների, վիրուսների դեմ պայքարի պրոֆիլակտիկ միջոցառումների վերաբերյալ: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Աշխատանք հակավիրուսային ծրագրերի հետ՝ տեղադրում, թարմացում, զննում
<b>Կատարման չափանիշներ</b>	1) կարողանում է կատարել հակավիրուսային ծրագրի տեղադրում, թարմացում, 2) կատարում է զննում :
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն առաջադրանքներ հակավիրուսային ծրագրերի տեղադրման , թարմացման, վիրուսակիր ֆայլերի վերացման, զննման վերաբերյալ: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես

	<p>հարց ու պատասխանը, համակարգչի վրա տրված առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կատարել ֆայլերի, թղթապանակների պաշտպանում ծածկագրով
<b>Կատարման չափանիշներ</b>	1) կարողանում է կատարել ֆայլերի պաշտպանում ծածկագրով, 2) կարողանում է կատարել թղթապանակների պաշտպանում ծածկագրով:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն առաջադրանքներ ֆայլերի, թղթապանակների ծածկագրով պահպանման, ինչպես նաև ծածկագրերի հեռացման առաջադրանքներ : Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, համակարգչի վրա տրված առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Օգտագործողների իրավունքների սահմանում
<b>Կատարման չափանիշներ</b>	1) կարողանում է տարբեր տիպի օգտագործողների համար սահմանել համապատասխան իրավունքներ, 2) կարողանում է իրականացնել ֆայլերի նկատմամբ իրավունքների սահմանում:

<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն հարցեր պարունակող հարցաթերթիկ տվյալների և ծրագրերի տարբեր տիպի օգտագործողների իրավունքների, ֆայլերի նկատմամբ իրավունքների սահմանման, հեղինակային իրավունքի նորմերի վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՇՕ-3-15-005
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ տեքստային խմբագրիչների մասին՝ որպես տեքստերի ստեղծման մշակման, խմբագրման և պահպանման հիմնական միջոց և զարգացնել հմտություններ ցանկացած բնագավառի աշխատատեղում համակարգչային գրագրության կազմակերպման համար:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 66 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՀՇՕ-3-15-001 «Տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցներ» և ՀՇՕ-3-15-002 «Օպերացիոն համակարգեր» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի տեքստային պրոցեսորների դերը որպես ինֆորմացիայի ստեղծման, մշակման, խմբագրման և պահպանման հիմնական միջոց, 2) ներկայացնի գործարար գրագրության հիմնադրույթները և կարողանա պատրաստել դիմումներ, նամակներ, տեղեկանքներ, հուշագրեր, հրամաններ, հայտարարագրեր, երաշխավորագրեր, պայմանագրեր՝ ռուսերեն, հայերեն, անգլերեն լեզուներով, կենսագրական տվյալներով փաստաթղթերի նմուշներ, օգտագործի ուղղագրության

	<p>ստուգման, սխալի հայտնաբերման և ուղղման, ռճային սխալների հրամանները (անգլերեն և ռուսերեն տեքստերում), ստանդարտ և օգտագործողի կողմից պահպանված նմուշները նոր տիպային փաստաթղթերի պատրաստման համար, կատարի էջի պարամետրերի հաստատում, էջերի համարակալում և տպում, կատարի հղումներ ցանցային տպիչին կամ ցանցի որևէ համակարգչի,</p> <p>3) ներկայացնի և օգտագործի աղյուսակների հետ օգտագործվող հրամանային մենյուի կետերը, աղյուսակների և եզրագծման գործիքները, տեքստում աղյուսակների զետեղումը, վիճակագրական, տեքստային, թվային տվյալներ պարունակող աղյուսակներում թվային արժեքների հետ հաշվարկային գործողությունների կատարման ֆունկցիաները, ինչպես նաև պատկերազարդման և տարատեսակ գրաֆիկներով ու դիագրամներով արտապատկերման կարգը,</p> <p>4) կատարի փաստաթղթերի մշակում, անհրաժեշտ ռճերով ձևավորում, ստացում և առաքում ֆաքսիմիլային ապարատների միջոցով, հեռախոսագծերի օգնությամբ, internet-ի, էլեկտրոնային փոստի միջոցով, իմանա www հատուկ ծառայությունում գրանցված տարբեր թեմաներին առընչվող փաստաթղթերին դիմելու ձևերը, ծառայություններում գործարարական բնույթի տեղեկատվության զետեղման և ստացման սկզբունքները, տեղային ցանցի մասնակիցների միջև փաստաթղթերի փոխանակության ապահովման, ինչպես նաև դրանց համատեղ մշակման մեթոդները:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տեքստային պրոցեսորների դերը որպես ինֆորմացիայի ստեղծման, մշակման, խմբագրման և պահպանման հիմնական միջոց
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում ինֆորմացիոն տեխնոլոգիաների փուլերը, ուսումնասիրման առարկան, հաշվողական տեխնիկայի զարգացման պատմությունը, տեքստային պրոցեսորների դերը որպես ինֆորմացիայի ստեղծման, մշակման, խմբագրման և պահպանման հիմնական միջոց, տեքստերի մշակման տեխնոլոգիան,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում տեքստային խմբագրիչի ինտերֆեյսում տեղ գտած տեղամասերի և գործիքների նշանակությունը, նրանց տեղադրման ու հեռացման միջոցները, ռեժիմների կարգավորման հրամանները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տեքստերի մուտքագրման ու պահպանման միջոցները որպես տեքստային տարբեր ֆորմատի փաստաթղթեր, որպես նմուշ, նմուշների ներդրման նշանակությունը տիպային փաստաթղթերի մշակումը և</p>

	<p>այդ աշխատանքների ավտոմատացումը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում տեքստերի ձևավորման հրամանները, տառատեսակների ներկայացումը տարբեր ոճերով ու չափերով, տառերի և տողերի միջև հեռավորությունների, սահմանների, լուսանցքների տեղադրման ու փոփոխման հրամանները, տողերի դասավորման հրամանները (ձախից, աջից, մեջտեղից ու երկկողմանի հավասարեցումով),</p> <p>5) ճիշտ է ներկայացնում փաստաթուղթը տարբեր գրաֆիկական պատկերներով ու սիմվոլներով ձևավորելու հրամաններն ու գործիքները, տարբեր օգնող ծրագրերի հետ կապ ապահովող տեղամասերը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կտրվի կիրառական փաստաթղթի նմուշ, որի հիման վրա ուսանողը պատրաստի փաստաթուղթը պետք է պահպանի տարբեր ֆորմատներով, օգտագործի տառերի ու տողերի ձևավորում, փաստաթղթում տեղադրի նկար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, համակարգչի վրա տրված առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել գործարար գրագրության հիմնադրույթները և կարողանալ պատրաստել դիմումներ, նամակներ, տեղեկանքներ, հուշագրեր, հրամաններ, հայտարարագրեր, երաշխավորագրեր, պայմանագրեր՝ ռուսերեն, հայերեն, անգլերեն լեզուներով, կենսագրական տվյալներով փաստաթղթերի նմուշներ, օգտագործել ուղղագրության ստուգման, սխալի հայտնաբերման և ուղղման, ոճային սխալների հրամանները (անգլերեն և ռուսերեն տեքստերում), ստանդարտ և օգտագործողի կողմից պահպանված նմուշները նոր տիպային փաստաթղթերի պատրաստման համար, կատարել էջի պարամետրերի հաստատում, էջերի համարակալում և տպում, կատարել հղումներ ցանցային տպիչին կամ ցանցի որևէ համակարգչի</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում գործարար գրագրության հիմնադրույթները, դիմելաձևերը,</p>

	<p>2) ճիշտ է կատարում տեքստային փաստաթղթի ստեղծման գործողությունները վերը նշված փաստաթղթերից որևէ մեկի պատրաստման օրինակի վրա,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի տիպայնացման և պահպանման հիմնական միջոցները,</p> <p>4) ճիշտ է կատարում փաստաթուղթը անհրաժեշտ ոճերով ձևավորման աշխատանքները, բազմաէջ փաստաթղթերի համարակալումը և դիտումը տպելուց առաջ,</p> <p>5) ճիշտ է կատարում տեքստային խմբագրիչի միջավայրում ֆայլերի ստեղծման ու պահպանման գործողությունները՝ որպես տեքստային ֆայլ կամ որպես նմուշ,</p> <p>6) ճիշտ է կատարում ուղղագրության ստուգման, սխալի հայտնաբերման և ուղղման, ոճային սխալների հրամանները (անգլերեն և ռուսերեն տեքստերում),</p> <p>7) ճիշտ է կատարում փաստաթղթի տպման պարամետրերի հաստատում, համարակալում, դիտում և տպում առկա տպիչով և կատարում է հղում ցանցային տպիչին,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի ստացման և առաքման ձևերը ֆաքսիմիլային ապարատների միջոցով, հեռախոսագծերի օգնությամբ,</p> <p>9) ճիշտ է կատարում փոփոխություններ ստանդարտ և օգտագործողի կողմից պահպանված նմուշների վրա և ստեղծում նոր փաստաթուղթ,</p> <p>10) ճիշտ է օգտագործում տպիչը,</p> <p>11) ճիշտ է պահպանում աշխատանքի անվտանգության և ինֆորմացիայի պահպանման կանոնները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի ստեղծել թղթապանակ օպերացիոն համակարգի միջավայրում, ֆայլ, որը կպարունակի որևէ կիրառական փաստաթղթի ձև՝ դիմումներ, նամակներ, տեղեկանքներ, հուշագրեր, հրամաններ, հայտարարագրեր, երաշխավորագրեր, պայմանագրեր՝ ռուսերեն, հայերեն, անգլերեն լեզուներով, կենսագրական տվյալներով փաստաթղթերի նմուշներ, օգտագործի ուղղագրության ստուգման, սխալի հայտնաբերման և ուղղման, ոճային սխալների հրամանները (անգլերեն և ռուսերեն տեքստերում), ստանդարտ և օգտագործողի կողմից պահպանված նմուշները նոր տիպային փաստաթղթերի պատրաստման համար, կատարի էջի պարամետրերի հաստատում, էջերի համարակալում և տպում, կատարի հղումներ ցանցային տպիչին կամ ցանցի որևէ համակարգչի, ընտրի անհրաժեշտ գործիքները, հրամանները, պաշտպանի աշխատանքի և ինֆորմացիայի</p>

	<p>անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում կատարում է վերը նշված հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Ներկայացնել և օգտագործել աղյուսակների հետ օգտագործվող հրամանային մենյուի կետերը, աղյուսակների և եզրագծման գործիքները, տեքստում աղյուսակների զետեղումը, վիճակագրական, տեքստային, թվային տվյալներ պարունակող աղյուսակներում թվային արժեքների հետ հաշվարկային գործողությունների կատարման ֆունկցիաները, ինչպես նաև պատկերազարդման և տարատեսակ գրաֆիկներով ու դիագրամներով արտապատկերման կարգը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում աղյուսակների հետ օգտագործվող հրամանային մենյուի կետերը, աղյուսակների և եզրագծման գործիքների նշանակությունը, տեքստում աղյուսակների զետեղման, տարբեր տվյալների մուտքագրման, խմբագրման և աղյուսակի ձևավորման միջոցները,</li> <li>2) մշակում է տրված աղյուսակը, մուտքագրում տվյալներ, ձևավորում, կատարում է դասակարգման գործողություններ,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում թվային տվյալներ պարունակող աղյուսակներում թվային արժեքների հետ հաշվարկային գործողություններ կատարելու ձևերը գործողության նշանների և ֆունկցիաների օգնությամբ,</li> <li>4) կատարում է հաշվարկներ, օգտագործելով ավտոգումարման գործիքը և ներկառուցված ֆունկցիաները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում փաստաթուղթը պատկերազարդելու և տարատեսակ գրաֆիկներ ու դիագրամներ արտապատկերելու միջոցները,</li> <li>6) ճիշտ է օգտագործում դիագրամների կառուցիչը և կառուցում է տարատեսակ գրաֆիկներ,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում փաստաթուղթը տարբեր գրաֆիկական պատկերներով ու սիմվոլներով ձևավորելու հրամաններն ու գործիքները, տարբեր օգնող ծրագրերի հետ կապ ապահովող տեղամասերը,</li> <li>8) կարողանում է փաստաթղթում տեղադրել ու մշակել բանաձևեր,</li> </ol>

	<p>9) ճիշտ է ձևավորում փաստաթուղթը տարբեր գրաֆիկական պատկերներով ու սիմվոլներով,</p> <p>10) պաշտպանում է աշխատանքի և ինֆորմացիայի անվտանգության կանոնները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի պատրաստել տարբեր քանակի սյուներով և տողերով աղյուսակներ, վարժ ներմուծել տվյալներ և ձևավորել եզրագծման գործիքների օգտագործմամբ, կատարել թվային արժեքներ պարունակող վանդակների հետ թվաբանական, տեքստի որոշակի հատվածի փնտրման, փոխարինման գործողություններ, ինչպես նաև ստանալ և առաքել փաստաթուղթը, ճիշտ ներկայացնել փաստաթղթի մշակման առանձնահատուկ պահերը, որոնք կկիրառվեն նաև նմանօրինակ տիպային փաստաթղթերի պատրաստման դեպքում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Կատարել փաստաթղթերի մշակում, անհրաժեշտ ոճերով ձևավորում, ստացում և առաքում ֆաքսիմիլային ապարատների միջոցով, հեռախոսագծերի օգնությամբ, Internet-ի, էլեկտրոնային փոստի միջոցով, իմանա WWW հատուկ ծառայությունում գրանցված տարբեր թեմաներին առընչվող փաստաթղթերին դիմելու ձևերը, ծառայություններում գործարարական բնույթի տեղեկատվության զետեղման և ստացման սկզբունքները, տեղային ցանցի մասնակիցների միջև փաստաթղթերի փոխանակության ապահովման, ինչպես նաև դրանց համատեղ մշակման մեթոդները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կատարում փաստաթղթում աղյուսակների ստեղծման և մշակման գործողությունները որևէ գործարարական փաստաթղթի պատրաստման օրինակի վրա,</li> <li>2) ճիշտ է կատարում թվային արժեքներ պարունակող վանդակների հետ թվաբանական գործողություններ ներկառուցված ֆունկցիաների օգնությամբ,</li> <li>3) ճիշտ է կատարում փաստաթուղթը անհրաժեշտ ոճերով ձևավորման աշխատանքները, բազմաէջ փաստաթղթերի</li> </ol>

	<p>համարակալումը, դիտումը տպելուց առաջ և տպումը,</p> <p>4) ճիշտ է կատարում նույնատիպ փաստաթղթերի մշակման ու առաքման գործընթացը տարբեր հասցեատերերի ուղարկելու համար՝ հասցեի գրքում հաշվառված կամ նոր մշակված տվյալների աղբյուրի մեջ մուտքագրումով,</p> <p>5) ճիշտ է կազմակերպում սարքերի հետ անվտանգ աշխատանքը և ինֆորմացիայի պահպանման անվտանգության ապահովման խնդիրը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի պատրաստել աղյուսակներ, վարժ ներածել տվյալներ և ձևավորել եզրագծման գործիքների օգտագործմամբ, կատարել թվային արժեքներ պարունակող վանդակների հետ թվաբանական գործողություններ՝ ներկառուցված ֆունկցիաների օգնությամբ, վարժ աշխատել աղյուսակների, վանդակների ու նրանց տվյալների հետ, կատարել տեքստի ռճային ձևավորման աշխատանքներ, ինչպես նաև ստանալ և առաքել փաստաթուղթը ֆաքսիմիլային ապարատների, հեռախոսագծերի օգնությամբ, Internet մոլորակային համակարգչային ցանցի, էլեկտրոնային փոստի հատուկ ծառայությամբ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ուղեցույց , պրոյեկցիոն սարք և դիտակտիկ պարագաներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<b>Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց ՈՒ Մ Ն Ե Ր Ի Պ Ա Տ Ր Ա Ս Մ Ա Ն Խ Մ Բ Ա Գ Ի Ր»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՇՕ-3-15-006
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ներկայացումների պատրաստման խմբագրով աշխատելու համար:
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>36 ժամ, որից</p> <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 32 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՀՇՕ-3-15-002 «Օպերացիոն

	համակարգեր» և ՀՇՕ-3-15-005 «Փաստաթղթերի մշակման տեխնոլոգիա» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) կարգաբերի ներկայացումների պատրաստման խմբագրի աշխատանքային տարածքը , պատրաստի և պահպանի ներկայացումները, 2) կարողանա ներկայացնել և օգտագործել շնորհանդեսային ծրագրային ապահովման հնարավորությունները, շնորհանդեսի սցենար կազմելու ձևերը և կառուցվածքը, սլայդի կառուցվածքը, հետպլանային սլայդ, օբյեկտների ներմուծում (ներառյալ ole), սլայդների անիմացիա և միջսլայդային անցում, գերիղումների օգտագործում, 3) կատարի փաստաթղթերի կրճատ ներկայացում, օգտագործելով ստեղծած կամ ներբեռնված որևէ մասնագիտական փաստաթուղթ և ցուցադրի ներկայացումների խմբագրիչով (շնորհանդեսային հոլովակի պատրաստում), 4) կատարի ներկայացումների տպում:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացումների պատրաստման խմբագրի աշխատանքային տարածքի կարգաբերում, ներկայացումների պատրաստում և պահպանում
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է կատարում ներկայացումների պատրաստման խմբագրի պատուհանի բացումը և փակումը, պատուհանների չափերի փոփոխությունը և հարմարեցումը, 2) ճիշտ է կատարում գործիքների վահանակների (toolbars) կարգաբերումը, 3) ճիշտ է կատարում տեքստի փոփոխությունը (normal, print layout, web layout, ... ), 4) ճիշտ է կատարում ներկայացումների պատրաստման խմբագրով անշարժ ներկայացման ստացումը, զունային ընտրությունը, ձևավորումը, չափերի ու դիրքավորման ընտրությունը, հարմարեցումը, 5) կարողանում է պահպանել արդեն պատրաստված ներկայացումը և կատարում է պահպանման ֆորմատի ընտրություն:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով: Ուսանողին կտրվի առաջադրանք ներկայացումների պատրաստման խմբագրի բացման և փակման, պատուհանների չափերի փոփոխության և համատեղման, նոր սլայդի ներմուծման, գործիքների վահանակների

